ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 18.12.2019թ. թիվ 24/22-Լ որոշմամբ սահմանված՝ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների հաստիքների թվաքանակը (59),

հաշվի առնելով հանրային պաշտպանների մասնագիտացումները սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու անհրաժեշտությունը,

ի գիտություն ընդունելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2022 թվականի հունվարի 1-ից **59 (հիսունինը)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **30 (երեսուն)** հաստիք, որից 22 (քսաներկու) հաստիքը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 8 (ութ) հաստիքը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **29 (քսանինը)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 06.11.2020թ. թիվ 378-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

02 նոյեմբեր 2021թ.
թիվ 264-Լ
ք.Երևան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
02.11.2021թ. թիվ 264-Լ որոշման
(նոր խմբագրությամբ՝ ըստ 18.02.2022թ. թիվ 38-Լ որոշման)

ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

(գործում է 2022 թվականի հունվարի 1-ից)

№	ՀՀ մարզ	ՀՊԳ նստավայր	Հաստիքների բաշխում			Հաստիք-ների ընդ. քանակը	ՀՊ-ների քանակը	Գործունեության վայր
1	*2*	*3*	*4*			*5*	*6*	*7*
1.	**Արագածոտն**	Աշտարակ	1	1		2	2	**Աշտարակ, Ապարան, Թալին**
2.	**Արարատ**	Արտաշատ	0,5	0,5	0,5	3	5	**Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի**
			1	0,5				
3.	**Արմավիր**	Արմավիր	1	0,5	0,5	4,25	7	**Արմավիր, Էջմիածին**
		Էջմիածին	1	0,5				
			0,5	0,25				
4.	**Գեղարքունիք**	Գավառ	0,5			1,75	4	**Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ**
		Սևան	0,5	0,25				
		Վարդենիս	0,5					
5.	**Կոտայք**	Հրազդան	0,5	0,5		3,75	7	**Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Աբովյան**
		Աբովյան	0,5	0,5				
			0,5	0,25				
		Եղվարդ	1					
6.	**Սյունիք**	Կապան	0,5	0,5	0,5	2,5	5	**Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի**
		Գորիս	0,5					
		Սիսիան	0,5					
7.	**Վայոց Ձոր**	Եղեգնաձոր	0,5	0,25		0,75	2	**Եղեգնաձոր, Վայք**
8.	**Տավուշ**	Իջևան	0,5	0,5	0,5	2,75	6	**Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ**
			0,5	0,5				
		Դիլիջան	0,25					
9.	**Լոռի**	Վանաձոր	1	1	1	4,25	6	**Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի**
			0,5	0,25				
		Ալավերդի	0,5					
10.	**Շիրակ**	Գյումրի	1	1	1	4	6	**Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Աշոցք**
			0,5	0,25	0,25			
Ընդհանուր թիվը						**29**	**50**	